

Armenische Landsmannschaft in Bayern e.V.
Պալարիոյ Հայ Հայրենակցական Միութիւն



Պալարիոյ Հայ Հայրենակցական Միութեան
Կանոնագրի

Հեղինակուած 2. Յուլիս 2011-ին

Միւնխէնի դատարանէն գրանցուած 29.08.11-ին

Կանոնագիր Պավարիոյ Յայ Յայրենակցական Միութեան

Յօդուած 1 Անունը, կեդրոնը և գործունեութեան շրջանը

1. Միութիւնը անուանուած է

«Պավարիոյ Յայ Յայրենակցական Միութիւն»

(ստորեւ կարճ կերպով Յ. Միութիւն անուանուած է):

Յ. Միութիւնը Միւնիսթէնի Դատարանի միութիւններու ցանկին մէջ VR7637 թիւով արձանագրուած է:

2. Կեդրոնը կը գտնուի Միւնիսթէնի մէջ:

3. Գործունեութեան տարեշրջանը, օրացուցային տարին է:

Յօդուած 2 Զեզոբութիւն

Յ. Միութիւնը կուսակցութիւններու և դաւանանքի նկատմամբ չէզոք է: Բացարձակ կերպով կուսակցաբաղաբական կամ գաղափարական նպատակներ չի հետապնդիր:

Յօդուած 3 Նպատակը

1. Յ. Միութեան նպատակներն են, պահպանել և հոգ տանիլ հայոց լեզուին, մշակոյթին, պատմութեան, բարքերուն և սովորութիւններուն, ինչպէս նաև մշակութային փոխարարութիւններ ստեղծելով գորակցիլ Յայերու և Գերմանացիներու միջեւ հաստատուող կապերուն ու միասնական ապրելակերպին:

2. Կանոնագրի նպատակը կիրականանայ մասնաւորաբար լեզուի դասընթացներով, յուշահանդէսներով, սեմինարներով, բանախօսութիւններով, նուագահանդէս և համերգներով, պատմութիւնը ու մասնաւորաբար «Յայոց Տեղասպանութիւնը» պատկերացնող ցուցահանդէսներով և նմանօրինակ մշակութային գործունեութիւններով: Ինչպէս նաև պատանիներու հանդէպ ցուցաբերուած գորակցութեամբ, անոնց ինքնագիտակցութիւնը և ընկերութեան հետ ամբողջականացումը զօրացնող գործերով, որոնք 1990-ի «Մանկապատանեկան Օգնութեան Օրէնքին» համաձայն կ'իրագործուին:

3. Յ. Միութեան նպատակներուն համապատասխան այլ գործունեութիւններու ընդգրկումը և կիրարկումը միշտ կարելի է:

Յօդուած 4 Ինքնութեան Օգտակարութիւն

1. Յ. Միութիւնը տուրքերու Օրէնքին «Տուրքերէն թեթեւցուած նպատակներ» բաժինին համաձայն, կը հետապնդէ միայն և ուղղակիօրէն հանրօգուտ նպատակներ:

2. Յ. Միութիւնը կը գործէ առանց սեփական շահաբոբրութեան: Ան առաջին հերթին չի ետապնդեր տնտեսական նպատակներ:

3. Յ. Միութեան նիւթական միջոցները կարող են գործածուիլ միայն այս կանոնագրին ոգին համապատասխանող նպատակներու համար:

Որեւէ անձ մը պէտք չէ որ ծախսերով, որոնք Յ. Միութեան նպատակներէն կը շեղին և կամ չափազանց բարձր գումարներով վարձատրուիլով՝ օգուտ քաղէ:

4. Անդամները իրենց անդամակցութեան հանգամանքով, Յ. Միութեան նիւթական միջոցներէն վարձատրութիւն չեն ստանար:

5. Յ. Միութեան մարմիններուն մէջ աշխատող անդամները պատուակալաբար կը ծառայեն: Միայն անոնց նպատակայարմար փաստացի ծախսերը կը վճարուին:

Յօդուած 5 Ի. Միութեան նիւթական աղբիւրները

1. Յ. Միութեան նպատակները իրագործելու համար անհրաժեշտ նիւթական միջոցները հետեւեալ եկամուտներով կ'ապահովուին.

ա) Անդամավճարներով

- բ) Նուիրատուութիւններով
- գ) Հանրապետական հաստատութիւններու օգնութեամբ
- դ) Հիմնարկներու միջոցաւ
- ե) Այլ եկամուտներով:

2. Հ. Միութեան Վարչութիւնը իր ակումբին այլ միութիւններու, կազմակերպութիւններու և անձերու կողմէ գործածման փոխարէն, իր ծախսերը ապահովելու համար, կարող է անոնցմէ որոշ գումար մը պահանջել: Այս վարձքը կ'որոշէ վարչութիւնը:

Յօդուած 6 Անդամակցութիւն

1. Հ. Միութեան անդամ կարող են ըլլալ, Պաւարիոյ մէջ բնակող և 18 տարեկանը աւարտած բոլոր հայերը, որոնք Հ. Միութեան նպատակներուն նեցուկ կը հանդիսանան:
Այս կանոնագրին իմաստով հայ կը նկատուին նաև հայու մը անմիջական ընտանիքին անդամները:
2. Անդամակցութեան դիմումը, գրաւոր կերպով և ստորագրուած երկու անդամներու կողմէ իբրեւ երաշխաւորներ, պէտք է յանձնուի վարչութեան:
3. Անձի մը Հ. Միութեան անդամակցութիւնը կ'որոշէ վարչութիւնը: Անդամակցութեան աղերսագիր մը մերժուելու պարագային, անձը կարող է յաջորդ անդամաժողովին գրաւոր դիմումով մը բողոքել:

Յօդուած 7 Անդամակցութեան սկիզբը և վերջը

1. Անդամակցութիւնը կ'սկսի աղերսագրին վարչութեան յանձնուած թուականէն սկսեալ, եթէ վարչութիւնը կամ անդամաժողովը անդամակցութեան աղերսը ընդունած է:
2. Անդամակցութիւնը կը վերջանայ հրաժարումով, անդամին Պաւարիայէն տեւակա-նաբար հեռացումով, անդամներու ցանկէն ջնջուելով, վտարումով և մահով:
Անդամի մը հրաժարականը, գրաւոր կերպով պէտք է ուղղուի վարչութեան:
3. Վարչութիւնը կարող է անդամ մը, անդամներու ցանկէն ջնջել, եթէ այդ անդամը իր անդամավճարը 6 ամիս չէ վճարած և վարչութեան գրաւոր ազդարարութիւնէն յետոյ, չէ վճարած 6 շաբթուան ընթացքին:
Վարչութեան ուղղարկած ազդարարագիրը ի գօրու է, եթէ իսկ նամակը՝ անգտանելիութեան պատճառաւ ետ դառնայ:
4. Վարչութեան բոլոր անդամներուն միաձայն որոշումով կարելի է անդամ մը վտարել, եթէ այդ անդամը Հ. Միութեան նպատակներուն սաստիկ հակառակ արարքներ կը գործէ:
Վարչութեան այս վտարումի որոշումին դէմ կարելի է յաջորդ անդամաժողովին գրաւոր կերպով առարկել:

Յօդուած 8 Անդամավճարներ

1. Անդամները վճարելու պարտական են իրենց անդամավճարները: Այս կը վճարուի կանխաւ կերպով:
2. Իբր անդամավճար վճարուելիք գումարը և անոր պարբերաբար վճարուելու ձեւը կը որոշուի անդամաժողովին կողմէ:
3. Եթէ անդամավճարները Հ. Միութեան ծախսերը ապահովելու բաւարար չեն ըլլար, անդամաժողովը կարող է յաւելուածական վճարումի մը որոշում տալ: Այս վճարումը վերջին անդամավճարին մինչեւ կրկնապատիկը կրնայ ըլլալ:

Յօդուած 9 Անդամներու իրաւունքները և պարտականութիւնները

1. Բոլոր անդամները ունին հաւասար իրաւունքներ և պարտականութիւններ:
2. Անդամաժողովներու ընթացքին ներկայ բոլոր անդամները քուէարկելու իրաւունքը ունին, եթէ՝ մինչեւ անդամաժողովին օրը իրենց անդամավճարումները կատարած և դեռ պարտական չեն:

3. Նոր անդամները կարող են ընտրել 3 ամսուան անդամակցութենէ վերջ, իսկ ընտրուելու համար պայման է 6 ամսուան ժամանակամիջոցի մը անցնիլը:
4. Վարչութիւնը կարող է երիտասարդ անդամներուն՝ որոնք նաև երիտասարդական յանձնախումբի անդամներ են, հայցին զիջել միութեան անդամավճարին կէսը: Ասոր նախապայմանն է որ երիտասարդները քսանհինգ տարեկանը աւարտած չ'ըլլան, ուսանին եւ կամ թէ անապաւէն անգործ ըլլան:
5. Վարչութիւնը կարող է նաեւ այն անդամներուն, որոնք ապացուցօրէն անթերի նութական դժուար դրութեան մէջ են , հայցին երկարածգել կամ թէ զիջել միութեան անդամավճարը ամբողջութեամբ կամ մասնակի. Դիմումը պիտի ապացուցուի.

Յօդուած 10 Միութեան Մարմինները

Միութեան մարմիններն են.

1. Անդամաժողովը
2. Վարչութիւնը
3. Երիտասարդական և մշակոյթի տեւական յանձնախումբերը.

Վարչութիւնը կարող է կարիքներու համաձայն այլ յանձնախումբեր կազմել:

Յօդուած 11 Անդամաժողով

Անդամաժողովը 3. Միութեան բարձրագոյն մարմինն է: Ան կը բաղկանայ քուէարկելու իրաւունքին տեր անդամներէ:

1. Կանոնաւոր անդամաժողովը կը կայանայ ամէն տարի անգամ մը, կարելիութեան համաձայն նախընտրելի կերպով տարուան առաջին եռամսեային մէջ (Յունուար, Փետրուար կամ Մարտ ամիսներուն մէջ):
2. Անդամաժողովը խորհրդակցութեան և որոշումի մարմին մըն է: Ան իրաւասու է զբաղուելու հետեւեալներով.
 - ա). Վարչութեան ներկայացուցած գործունեութեան տարեկան զեկոյցը նաև հաշուեքննիչ յանձնախումբին հաշուական զեկոյցը ստանալ և գնահատել
 - բ). Վարչութեան գործունեութեան հաւանութիւն տալ և լիցքաթափել Վարչութիւնը
 - գ). Վարչութեան անդամներ ընտրել
 - դ). Հաշուեքննիչ յանձնախումբը ընտրել
 - ե). Ճշդել անդամավճարի գումարը և անոր վճարուելու ձեւը
 - զ). Ընդունել կամ մերժել անձերու անդամակցութիւնը՝ վարչութեան դիմումով կամ առարկութիւններու առնչութեամբ:
 - է). Որոշում տալ կանոնագրի նաև աշխատածեւի ու խորհրդակցական կանոններու փոփոխութեան
 - ը). Աշխատիլ զանազան դիմումներու և հարցերու վերաբերեալ
 - թ). Պաշտօնանկ ընել վարչական անդամները
 - ժ). Որոշում տալ 3. Միութեան վերջնական փակման

Յօդուած 12 Անդամաժողովի կոչը

1. Կանոնաւոր անդամաժողովի հրաւերը վարչութեան կողմէ պարզ նամակով մը կը կատարուի, որը անդամաժողովին հաւաքուելիք թուականէն առնուազն երկու շաբաթ առաջ բոլոր անդամներուն կ'ուղղարկուի: Եթէ օրակարգը կանոնագրի փոփոխութեան կէտ մը կ'ընդգրկէ, այդ պարագային պայման է կանոնագրի փոփոխութեան առաջարկներուն ալ միասնաբար հաղորդումը:
2. Կանոնաւոր անդամաժողովի հրաւիրող նամակը, անդամաժողովին որոշում կայացնելու անկարելիութեան հաւանականութեան համար, կարող է բովանդակել նաև վերոյիշեալ անդամաժողովէն վերջ արտակարգ անդամաժողովի մը հաւաքուելու կարելիութիւնը, որը որոշելու անկարելիութեան ճշդումէն անմիջապէս մէկ ժամ յետոյ նոյն օրակարգով կը կայանայ:

Անհրաժեշտ է սակայն հասկացողութեան սխալի մը տեղի չտալու համար, հրաւերի նամակին մէջ բացայայտ կերպով մատնանշել այս պարագան:

3. Եթէ գումարուած կանոնաւոր անդամաժողովը որոշելու անկարելիութեան պատճառաւ չկարողանայ իր աշխատանքին սկսիլ և 12 յօդուածին 2. կետը գործածութիւն չգտնայ, այն ատեն վարչութեան պարտականութիւնն է 3 շաբթուան ընթացքին նոյն օրակարգով գումարել արտակարգ (բացառիկ) անդամաժողով մը:
4. Արտակարգ անդամաժողով մը պետք է գումարուի նաև այն ատեն, երբ քուէարկելու իրաւունքին տէր անդամներու 1/3-ը, օրակարգն ալ յայտնելով կը պահանջէ, կամ վարչութիւնը կ'որոշէ զայն, պարզ մեծամասնութեամբ:
Արտակարգ անդամաժողով մը գումարելու ժամանակամիջոցը ստիպողական հարցերու համար կարելի է կարճեցնել մինչեւ մէկ շաբաթ:
5. Անդամներու օրակարգին վերաբերեալ դիմումները գրաւոր կերպով պետք է կատարուին վարչութեան մօտ, ամենէն ուշ անդամաժողովին գումարուելիք թուականէն 7 օր առաջ:
6. Բոստի կնիքի թուականը ի զօրու է ժամանակամիջոցներու ճշման համար :

Յօդուած 13 Անդամաժողովի մը որոշում տալու կարողութիւնը

1. Կանոնաւոր անդամաժողով մը որոշում տալու կարող է, եթէ 3. Միութեան քուէարկելու իրաւունքին տէր անդամներուն կեսը ներկայ են:
2. Եթէ յօդուած 12-ի 2,3 կամ 4 կետերուն համաձայն արտակարգ անդամաժողով մը գումարուած է, այդ պարագային առանց նկատի առնելու քուէարկելու իրաւունքին տէր ներկայ անդամներուն թիւը, վերոյիշեալ անդամաժողովը որոշումներ կարող է տալ:
3. Կանոնագրի փոփոխութեան մը համար որոշում տալու կարողութիւնը կախեալ է, քուէարկելու իրաւունքին տէր անդամներու 2/3-ին ներկայութենէն:
Յօդուած 12-ի 2-րդ կետը այստեղ գործածութիւն չունենար:
4. Վարչութիւն մը և կամ առանձին վարչական անդամներ պաշտօնանկ ընելու համար յօդուած 13-ի 3-րդ կետին մէջ յիշուած պայմանները լրացուած պետք է ըլլան:
5. 3. Միութիւնը վերջնականապէս փակելու որոշում տալու համար, անհրաժեշտ է քուէարկելու իրաւունքին տէր անդամներուն առնուազն 3/4-նոց մեծամասնութեան ներկայութիւնը:

Յօդուած 14 Անդամաժողովի կողմէ որոշումներու կայացումը

1. Անդամաժողովը կարող է միայն այնպիսի հարցերու մասին որոշումներ տալ, որոնք իր գումարուած թուականին օրակարգին մէջ նշուած և կամ յօդուած 12-ի կետ 5-ին համաձայն որոշումի համար անդամաժողովին ներկայացուած, կամ ալ որոշումի հանգելու համար իւրաքանչիւր յատուկ հարցին վերաբերեալ անհրաժեշտ քուէական մեծամասնութեամբ, վերջէն օրակարգին առնուած են:
2. Անդամաժողովը որոշումներ կուտայ, քուէներու պարզ մեծամասնութեամբ, երբ այս կանոնագրին համաձայն անելի մեծաթիւ քուէներ չեն պահանջուած:
Քուէներու հաւասարութեան պարագային, դիմումը մերժուած կը նկատուի.
Չեղեալ քուէները ինչպէս նաեւ ձեռնապահ քուէները հաշիւի չեն առնուիր:
3. Անդամաժողովը կանոնագրի փոփոխութեան մը որոշում տալու համար, պայման է ներկայ անդամներուն 2/3-նոց քուէներու մեծամասնութիւնը:
4. 3. Միութեան վերջնական փակման որոշումին համար, ներկայ անդամներու քուէներուն 3/4-նոց մեծամասնութիւնը անհրաժեշտ է:
5. Քուէարկութիւնները ընդհանրապէս կը կատարուին բացայայտօրէն, ձեռք բարձրացնելով և կամ քուէտոմսի բարձրացումով. եթէ քուէարկութեան արդիւնք մը կասկածելի կը թուի կամ քուէարկելու իրաւունքին տէր անդամ մը գաղտնի քուէարկութիւն կը պահանջէ, օրուան նախագահը կարող է կամ դիմումի մը համապատասխան և կամ ալ իր անձնական որոշումով, պարագային համեմատ օրակարգի առանձին կետերուն համար գրաւոր քուէարկութեան որոշում տալ:

Օրուան նախագահին այս որոշումը միայն կարելի է փոխել, որոշումի հանգելու համար անհրաժեշտ քուէներու պարզ մեծամասնութեամբ:

6. Վարչութիւնը կամ անոր առանձին անդամները կը նստրուին կամ ալ պաշտօնանկ կարող են ըլլալ միշտ գաղտնի (գրաւոր) քուէարկութեամբ:
7. Անդամաժողովի ընթացքը պէտք է ատենագրուի:
Այս պէտք է ստորագրուի օրուան նախագահին և քարտուղարին կողմէ:

Յօդուած 15 Ընտրութեան կանոնները

1. Վարչութեան ընտրութիւն մը կատարելու համար, երեք հոգինոց ընտրական յանձնախումբ մը կը կազմուի. Այս յանձնախումբը կը բաղկանայ ընտրութեան ղեկաւարէն ու անոր երկու օգնականներէն: Ընտրական յանձնախումբի անդամները քուէներու պարզ մեծամասնութեամբ կ'որոշուին:
2. Վարչական կարող են ընտրուիլ միայն այն անձերը, որոնք թեկնածու վարչականներու ճշդման ժամանակամիջոցին, սրահին մէջ ներկայ գտնուելով, անդամաժողովին, իրենց թեկնածութիւնը անձնապէս և բացայայտօրէն կը յայտնեն:
Պատճառաբանեալ բացակայութեան մը պարագային, կարելի է ընդհանուր պատրաստակամութիւն յայտնել, հաւանական թեկնածութեան կամ ընտրուելու համար: Վերոյիշեալ յայտարարութիւնը կը կատարուի վարչութեան հասցէին առաջուց և գրաւոր կերպով: Եթէ անդամաժողովը այս գրաւոր բացատրութիւնը ընդունի պարզ մեծամասնութեամբ մը, նկատած կըլլայ իբրեւ անձնական յայտարարութիւն:
3. Վարչութեան ընտրութիւններու ատեն կարելի է բազմաթիւ անձեր ցանկերով ընտրել:
4. Քուէներու օրինաւոր թղթիկները կարող են միայն համապատասխան կերպով թեկնածու ճշդուած անձերու անունները բովանդակել:
Չեղեալ կը նկատուին այն քուէարկման թղթիկները, որոնք ստորագրուած են կամ հաւելուած գրութիւն մը կը պարունակեն: Չեղեալ կը համարուին նաև քուէարկողին կամքը բացայայտ կերպով չարտայայտող թղթիկները:
Պարապ տրուած թղթիկները կը նկատուին ձեռնպահ քուէներ:
5. Երբ քուէներու հաւասարութիւն մը գոյացած է, վերաքուէարկութեամբ որոշումի մը կը հանգուի:

Յօդուած 16 Վարչութիւնը

1. Ատենապետ, փոխ. ատենապետ, քարտուղար, գանձապահ և պատանեաց ու մշակութային հանձնախումբերէ պատասխանատու անձ է մը բաղկացեալ 5 անդամներէ կը կազմուի 3. Միութեան Վարչութիւն:
2. Վարչական զանազան պաշտօններ կարելի չէ կենդրոնացնել անձի մը վրայ:
3. Վարչութեան անդամները, անդամաժողովին կողմէ կը նստրուին երկու տարուան շրջանի մը համար. Անոնք կը մնան իբրեւ վարչականներ, մինչեւ նոր վարչութեան մը իր պաշտօնին սկսիլը:
4. Երբ վարչական անդամ մը կանուխ կը բաժնուի իր պաշտօնէն, այդ պարագային վարչութիւնը, վարչական ընտրութեան ժամանակ ընտրուելու պատրաստակամ թեկնածուներու ցանկէն, իրենց ստացած քուէներուն համաձայն, անդամով մը կը լրացնէ իր վարչական կազմը:
Եթէ վերոյիշեալ թեկնածուներու ցանկին մէջ գտնուող անձերը վերջացած են, կամ այս անձերէն եթէ ոչ մէկը չուզեր վարչութեան մաս կազմել, այն ատեն վարչութիւնը իրաւասու է ուրիշ անդամով մը իր կազմը ամբողջացնելու: Այս վերջինը սակայն յօդուած 9 կետ 3-ին համաձայն ընտրուելու իրաւասու պէտք է ըլլայ:
Այս կերպով ընտրուած վարչական անդամին պաշտօնն ալ կը վերջանայ նոյնպէս, շարունակուող ընտրական շրջանին հետ:
5. Գերմանական BGB օրէնքին յօդուած 26-ին համաձայն վարչական նախագահ կը նկատուին միայն ատենապետը և փոխ ատենապետը: Թէ ատենապետը և թէ փոխ ատենապետը բոլոր գործերու և հարցերու վերաբերեալ 3. Միութիւնը առանձին ներկայացնելու իրաւասութեան տէր են բացի դրամական գործողութիւններու և օրինաւոր նիւթական պարտականութիւններ ստանձնելու առնչութեամբ:

6. Պաշտօնական յայտարարություններու համար, որոնք Հ. Միութեան հարստութեան հետ կամ անոր օրինաւոր նիւթական գործերուն կամ հարցերուն հետ կապուած են, կամ ալ դրամական շարժումներու յատուկ հրամաններու համար, պայման է գրաւոր ձեւը և ատենապետին կամ փոխ ատենապետին ու գանձապահին միասնական ստորագրութիւնները:

Յօդուած 17 Վարչութեան պատասխանատուութիւնները, իրաւասութիւնները և անոր ղեկավարութիւնը

Վարչութիւնը պատասխանատու և իրաւասու է Հ. Միութեան բոլոր գործերուն և հարցերուն համար, բացի այս կանոնագրին միջոցաւ Հ. Միութեան այլ մարմիններուն վերագրուած պարտականութիւններէն:

1. Վարչութեան ժողովները նախագահին և կամ անոր բացակայութեան փոխ նախագահին կողմէ կը գումարուին:
2. Վարչութիւնը որոշումի մը հանգելու համար, իր անդամներուն մեծամասնութեան մասնակցութիւնը անհրաժեշտ է:
3. Երբ վարչական անդամ մը, գրաւոր քուէարկութիւն չի պահանջեր, վարչութեան որոշումները կը տրուին բերանացի կերպով:
4. Քուէարկութեան միջոցին, որոշում կը կայանայ, ներկայ վարչական անդամներու մեծամասնութեամբ:
Քուէներու հաւասարութեան պարագային առաջարկը կամ դիմումը մերժուած կը նկատուի:
5. Հարցի մը վերաբերեալ անձնապէս մասնակից վարչական անդամները, այդ յատուկ որոշումին կայացման մէջ մաս չեն կարող կազմել:
6. Անհրաժեշտ է վարչութեան նիստերուն և տրուած որոշումներուն մասին արձանագրութիւններ կատարել, որոնք պետք է ստորագրուին նախագահին և քարտուղարին կողմէ:

Յօդուած 18 Գանձապահութիւն և հաշուեքննիչներ

1. Գանձապահը պետք է դրամական ելմտային շարժումներու առնչութեամբ արձանագրութիւններ կատարէ Հ. Միութեան տոմարին մէջ և պատրաստէ տարեկան հաշիւ մը:
2. Տարեկան հաշիւը երկու հաշուեքննիչներու կողմէ, որոնք անդամաժողովին միջոցաւ երկու տարուան համար կը նտրուին, պետք է քննուի և անդամաժողովին ներկայացուի անոր արտօնութեան համար:
3. Հաշուեքննիչներու քննադատութիւնները միայն կարող են ուղղուիլ գանձապահին հաշուապահութեան և անոր միութեան տոմարին մէջ կատարած արձանագրութեանց վերաբերեալ. Անոնք իրաւասու չեն քննադատելու, վարչութեան կողմէ որոշուած ծախսերու նպատակայարմարութիւնը:

Յօդուած 19 Հ. Միութեան վերջնական փակումը

1. Հ. Միութեան վերջնական փակման և կամ տուրքերէ թեթեւացման նպատակներէ շեղման պարագային, Հ. Միութեան նիւթական արժեքները կը փոխանցուին Գերմանիոյ «Հայաստանի Համահայկական Հիմնադրամ»-ին. Ան այս արժեքները պետք է գործէ ուղղակիօրէն և միայն հանրօգուտ նպատակներու համար:
2. Հ. Միութեան փակման հետ առնչուող գործերն ու հաշուեյարդարը կը կատարուին վարչութեան կողմէ:

Մյունխէն 2 Յուլիս 2011